

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՆՈՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՎԻՐԱՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՐ (Հրայյա Աճառյանի ծննդյան 140-ամյակի առթիվ)*

Հրայյա Աճառյանը հայագիտության այնպիսի երախտավորներից է, որոնց ծննդյան տարեդարձները նրանց երկրային կյանքի ավարտից հետո էլ դեռ երկար տասնամյակներ առիթ են դառնում մեկ անգամ ևս անդրադառնալու նրանց կյանքին ու գործունեությանը, հանրագումարի բերելու և գնահատելու նրանց անցած ուղին:

Հրայյա Աճառյանը այն բացառիկ հետազոտողներից է, որոնց հիմնարար աշխատությունները հայագիտության և լեզուների համեմատական քննության բազմազան ոլորտներում ելակետ և ուղենիշ են ծառայել ու դեռ պիտի ծառայեն հայ լեզվաբանների ու բանասերների այսօրվա ու հաջորդ սերունդների համար:

Չի կարելի ասել, թե Հրայյա Աճառյանի կյանքը հարթ է ընթացել: Լինելով արևմտահայ իր կյանքի առաջին կեսին նա կրել է եղեռնի հետևանքներն ու աստանդական կյանքի դժվարությունները, ճաշակել է ծանր աշխատանքով հաց վաստակելու «դառնությունն ու քաղցրությունը» և ի վերջո երջանկություն է ունեցել հանգրվանելու մայր հայրենիքում և իր ամբողջ կյանքը նվիրելու հայրենի գիտության զարգացմանն ու առաջընթացին: Նա իր գիտական սխրանքով դարձել է մեծ լեզվաբան-հայագետ, հայ նոր լեզվաբանության ակունքներում կանգնած հսկա, որից սկսվում է հայերենի պատմահամեմատական քերականության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության համակարգված քննությունը: Նրա կյանքը մի օրինակ է լարված ու հարատև աշխատանքի, անսահման նվիրումի, անշեղ ու վերընթաց կատարելագործման և որպես այդ ամենի արդյունքի՝ գնահատանքի ու ճանաչման: Եվ զարմանալի չէ, որ իր բազմաբեղուն կյանքի ընթացքում նա վաստակել է գիտական կոչումներ, վայելել իր աշակերտների ու գործընկերների անկեղծ հիացմունքն ու սերը:

Հիշատակենք նրա կյանքի մի քանի ուղենշային փաստեր և հանգամանքներ:

Հրայյա Հակոբի Աճառյանը ծնվել է 1876 թվին Կոստանդնուպոլսում: Միջնակարգ կրթությունը ստացել է Պոլսի Կենտրոնական վար-

* Հոդվածի հիմքում դրված է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրայյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին նվիրված «Հայերենի ուսումնասիրության և կանոնարկման արդիական խնդիրներ» միջազգային գիտաժողովի լիագումար նիստում (12 հոկտեմբերի 2016 թ.) հեղինակի կարդացած զեկուցումը:

Ժառանգում: 1895 թվից սովորել է Սորբոնի համալսարանում՝ աշակերտելով նշանավոր հայագետ Անտուան Մեյեին, 1897 թ., ընդամենը 21 տարեկանում, դարձել է Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, այնուհետև 1898 թ. կրթությունը շարունակել է Ստրասբուրգում՝ ունկնդիր լինելով Հայնրիխ Հյուբշմանին:

Այս համալսարաններում է, որ նա հասու է լինում ժամանակի հնդեվրոպաբանության բարձրագույն նվաճումներին, որոնք նա պահպանել ու զարգացրել է հայագիտության բնագավառում իր ամբողջ կյանքում, որտեղ էլ աշխատելիս լիներ, ինչ դիրք էլ զբաղեցներ, սկսած սովորական ուսուցչից մինչև համալսարանի դասախոս ու ամբիոնի վարիչ և հայ ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Եվրոպայի հայտնի համալսարաններում կրթությունն ավարտելով՝ Հ. Աճառյանը որպես ուսուցիչ աշխատել է Անդրկովկասի և Իրանի տարբեր քաղաքների հայկական դպրոցներում: 1923 թվականին հրավեր է ստացել Երևանի պետական համալսարանից, որտեղ աշխատել է մինչև կյանքի վերջը, նախ՝ որպես դասախոս և ապա՝ ամբիոնի վարիչ: Այդ տարիների ընթացքում նա դասավանդել է ընդհանուր լեզվաբանական և հայագիտական բազմաթիվ առարկաներ:

1937 թվականին Հ. Աճառյանն ընտրվել է Չեխոսլովակիայի արևելագիտության ինստիտուտի թղթակից անդամ, իսկ 1943 թվականին դարձել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս:

Հ. Աճառյանի գիտական հետաքրքրությունները ձևավորվել են շատ վաղ, դեռևս աշակերտական նստարանից: Պոլսի Կենտրոնական վարժարանում սովորելու առաջին իսկ տարվանից Հ. Աճառյանը, ինչպես նշում է նրա աշակերտ և կենսագիր Գառնիկ Ստեփանյանը, «խանդավառվել էր հնդեվրոպական լեզվաբանությամբ»¹, իսկ իր առաջին հոդվածը տպագրել է 1895 թ., երբ դեռ 19-ամյա պատանի էր:

Հ. Աճառյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, որոնք նվիրված են հայագիտության ամենաբազմազան բնագավառներին: Թեև նրանից առաջ էլ առանձին հետազոտողներ անդրադարձել են հայագիտության տարբեր հարցերի, սակայն իրականում նա է հայոց լեզվի պատմության, հայերենի պատմահամեմատական քերականության, հայ բարբառագիտության համակարգված քննության ռահվիրան: Նա առաջինն է, որ կատարել է հայ բարբառների ձևաբանական դասակարգումը, տվել է մոտ երկու տասնյակ բարբառային միավորների մենագրական նկարագրությունը, կազմել է 30 000 բառահոդված պարունակող բարբառագիտական բառարան:

Հ. Աճառյանի գիտական աշխատությունների մեջ նշանակալից տեղ է գրավում «Հայոց լեզվի պատմությունը»՝ երկու հատորով, որոն-

¹ Գառնիկ Ստեփանյան, Հրաչյա Աճառյան: Կյանքը և գործը, Եր., 2013, էջ 35:

ցում հեղինակն ուսումնասիրում է հայոց լեզվի ծագման, հնդեվրոպական լեզուների ընտանիքում նրա գրաված դիրքի հարցերը, տալիս է հայերենի բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը, բաժանելով այդ բառապաշարը բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական ծագման բառերի, հնագույն և նոր փոխառությունների և անհայտ ծագման բառերի: Նշված մենագրության մեջ հեղինակը ներկայացնում է նաև գրական հայերենի պատմական զարգացումը՝ առանձնացնելով հին, միջին և նոր կամ ժամանակակից շրջաններ, տալիս է դրանցից յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունների նկարագրությունը և լեզվական փոփոխությունների ընթացքն ու զարգացման միտումները:

Իր տեսակի մեջ եզակի է «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատությունը, որը նվիրված է հայերենի պատմահամեմատական, մասամբ նաև տիպաբանական քննությանը: Հայերենի քերականության յուրաքանչյուր առանձնահատկություն քննվում է նախ ընդհանուր լեզվաբանական տեսակետից՝ պարզելու տվյալ երևույթի դրսևորումները աշխարհի լեզուներում, այնուհետև այդ նույն երևույթը ավելի հանգամանորեն ներկայացվում է հնդեվրոպական լեզուների մեջ, և այդ նկարագրությունը կազմում է աշխատության համեմատական քերականության բաժինը, ապա հեղինակն անցնում է հայերենին՝ քննելով հայերենում այդ երևույթի ընդհանրություններն ու տարբերությունները հնդեվրոպական մյուս լեզուների համեմատությամբ, և վերջապես ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է հայերենի լեզվանյութը տարածաժամանակային համապարփակ ընդգրկմամբ՝ ի ցույց դնելով դրա գրաբարյան, միջինհայերենյան, աշխարհաբարյան և բարբառային դրսևորումները, այսպիսով ամբողջացնելով երևույթի եռակողմ նկարագրությունը՝ ընդհանուր լեզվաբանական, պատմահամեմատական և բուն հայերենագիտական մոտեցումներով: Այսօրվա գիտության տվյալներով այս աշխատության մեջ տեղ գտած որոշ փաստեր կարող են հնացած լինել կամ ճշգրտման կարիք ունենալ (հատկապես իր ժամանակ դեռևս քիչ հայտնի կամ բավարար չափով չուսումնասիրված լեզուների վերաբերյալ), սակայն այս գործը հնարավոր չէ շրջանցել հայերենին նվիրված քիչ թե շատ ամբողջական ուսումնասիրություն ձեռնարկելիս:

2. Աճառյանի գիտական ժառանգության պսակն է հռչակավոր «Հայերեն արմատական բառարան» աշխատությունը, որի առաջին՝ ապակետիպ հրատարակությունը 7 հատորով հեղինակն իր ձեռքով է արտագրել և տպագրված պրակները անձամբ հասցրել բաժանորդներին: Եվ միայն տասնամյակներ անց նրա նշանավոր աշակերտի՝ ակադեմիկոս Է. Աղայանի խմբագրությամբ իրագործվել է դրա քառահատոր հրատարակությունը տպագրական եղանակով: Աշխատությունը պարունակում է ավելի քան 11 000 արմատների նկարագրությունը

ըստ ծագման, բառակազմական հարստության, այսինքն՝ յուրաքանչ-յուր արմատից անձնացված և բարդված բառերի առկայության, տարընթերցումներով և բարբառային տարբերակներով, դրանց ստուգաբանության պատմությամբ և այլ հատկանիշներով:

Բանասիրական և ստուգաբանական բնույթ ունի նաև հինգհատորանի «Հայոց անձնանունների բառարանը», որտեղ ներկայացվում են V-ից մինչև XV դարը հայ մատենագրության մեջ հանդիպող անձնանունները ստուգաբանական քննությամբ և այդ անունները կրող պատմական անձանց մասին համառոտ տեղեկություններով:

Ն. Աճառյանի գրչին են պատկանում բանասիրական, գրականագիտական, տեքստաբանական, ձեռագրագիտական բնույթի բազմաթիվ այլ հետազոտություններ, այդ թվում՝ հայոց գրերին նվիրված եռահատոր արժեքավոր մենագրությունը: Մեծ գիտնականին հետաքրքրել են նաև հայոց պատմության, գեղարվեստական գրականության, հայ բանահյուսության հարցերը:

Ն. Աճառյանի ընդհանուր լեզվաբանական հայացքներն արտացոլված են նրա «Լիակատար քերականության» և «Հայոց լեզվի պատմության» մեջ: Լինելով Ա. Մեյեի աշակերտը՝ Ն. Աճառյանը պատկանում էր լեզվաբանության մեջ հանրաբանական կամ սոցիոլոգիական ուղղության փարիզյան դպրոցին, համեմատական լեզվաբանության մեջ ներկայացնում էր դրա դասական մակարդակը, լեզվի պատմական զարգացման ընթացքի մեկնաբանության մեջ կողմնակից էր էվոլյուցիոնիստական, այսպես ասած՝ հարաշրջականության տեսությանը:

Ն. Աճառյանի հետազոտական մեթոդներն ու սկզբունքները մեծ ազդեցություն են թողել հատկապես արդի հայ լեզվաբանության ավագ սերնդի ներկայացուցիչների վրա, որոնք հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունների բնագավառում և հայ բարբառագիտությանն ու հայոց լեզվի պատմությանը նվիրված հարցերի քննության մեջ մշտապես աչքի առաջ են ունեցել նրա գործերը որպես ամենավստահելի մեկնակետ: Ն. Աճառյանի աշխատությունների հիմնական արժանիքներից մեկը քննվող նյութի արտակարգ առատության հետ մեկտեղ դրա հավաստիության բարձրագույն աստիճանն է:

Հայ լեզվաբանների համար Ն. Աճառյանի կերպարը նաև խորհրդանշական արժեք ունի: Նա խորհրդանիշ է գիտական անաչառության և անվերապահ նվիրումի գործունեության իր ընտրած բնագավառին: Նա խորհրդանիշ է անսահման աշխատասիրության, քննախույզ մտքի, փաստական ճշգրտության ու հավաստիության հասնելու ձգտման: Նա խորհրդանիշ է նաև խստագույն սկզբունքայնության և հավատարմության իր գաղափարներին, բոլոր հանգամանքներում ճշմարտությունը ամենից վեր դասելու ունակության:

Այդ հատկանիշների շնորհիվ է, որ ամբողջ կյանքում նա պահպանել է մարդկային բարձր հատկությունները իր ապրած ժամանակի բո-

լոր պատմաքաղաքական ու հասարակական հակասություններով, պետական գաղափարախոսության կաշկանդումներով, հաճախ ստեղծագործ մտքի համար անընդունելի սահմանափակումներով, հալածանքներով ու անարդարությամբ: Ի դեմս Հ. Աճառյանի՝ մենք տեսնում ենք ազնիվ գիտնականին, որ չնայած կրած դժվարություններին ու ստիպումներին, նույնիսկ բանտարկությանը՝ մնաց իր համոզմունքների մեջ տոկուն, զիջումներ չարեց իր սկզբունքներից և հակառակ վատառողջ վիճակին՝ ընտանեկան դժբախտություններին ու հասարակական ճնշումներին՝ գիտության մեջ և կյանքում մնաց հոգեպես աներեր ու անզիջում իր բարոյական նկարագրով, թեև բնականից ուներ մեղմ ու բարեհամբույր բնավորություն:

Հանրահայտ է, որ Հ. Աճառյանի գիտական վաստակը գնահատվել է շատերի կողմից, նրանից մեծապես օտվել են հայ լեզվաբանների ու բանասերների շատ սերունդներ, որպես ամենահեղինակավոր գիտնականի՝ հղումներ և մեջբերումներ են արել նրա գործերից, ավելին, հոդվածներ, հետազոտություններ, նաև ատենախոսություններ են նվիրվել նրա գիտական գործունեության այս կամ այն բնագավառին՝ մանրամասն ու խոր վերլուծություններով ամբողջացնելով նրա կերպարը: Ի դեմս նրա՝ երիտասարդ սերնդին ներկայանում է հայ մտավորականի վառ օրինակը, նվիրվածությունը գիտությանը, անդուլ աշխատասիրությունը, սկզբունքայնությունը, բժախնդրությունը փաստական նյութի հավաքման ու վերլուծության մեջ, գիտական հետաքրքրությունների զարմանալի լայն շրջանակը, բազմաթիվ լեզուների գիտական ու գործնական հիանալի իմացությունը: Միաժամանակ խորապես հուզիչ է նրա նվիրվածությունն ու երախտագիտական ջերմ զգացումը իր ուսուցիչների հանդեպ՝ սկսած Պոլսի իր դպրոցներից մինչև Փարիզ ու Ստրասբուրգ, որտեղ նա աշակերտել է ժամանակի մեծ լեզվաբաններին, վայելել նրանց հոգատարությունն ու օժանդակությունը: Եվ որպես դրա տրամաբանական շարունակություն՝ ինքն էլ նույնքան հոգատար և ուշադիր է եղել իր շնորհալի աշակերտների նկատմամբ:

Աճառյանին բարձր են գնահատել հայ և օտարազգի շատ նշանավոր հայագետներ և հնդեվրոպաբաններ: Բավական է հիշատակել Անտուան Մեյեին: Արժեքավորելով նրա կոթողային գործը՝ «Հայերեն արմատական բառարանը», Ա. Մեյեն հպարտությամբ է նշել, որ նա եղել է իր աշակերտը: Հ. Աճառյանին սիրում ու գնահատում էին նաև նրա բազմաթիվ գործընկերներն ու աշակերտները, որոնց թվում են այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք են Գ. Ջահուկյանն ու Է. Աղայանը: Հատկապես վերջինիս զգացմունքներն իր ուսուցչի հանդեպ պաշտամունքի էին հասնում: Հ. Աճառյանի գիտական վաստակի գնահատանքի մի համեստ տուրք է նաև այն, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը կոչվում է նրա անունով:

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ